ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/Հ	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացությունը	Կատարված փոփոխությունը
1.	2	3	4	5
1.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 27.11.2019թ. N ԶԲ/ԱՊ-2/25465-2019 գրություն	Դիտողություններ և առաջարկություններ չկան:		
2.	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն 26.11.2019թ. N 01/03-1/8332-2019 գրություն	Դիտողություններ և առաջարկություններ չկան:		

3.	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն 29.11.2019թ. N 01/16.1/11889-2019 գրություն	Առարկություններ և առաջարկություններ չկան:		
4.	ՀՀ առողջապահության նախարարություն 22.11.2019թ. ԱԹ/11.1/22111-2019 գրություն	1) Առաջարկվել է Նախագծի 1-ին հոդվածից հանել «այսուհետ նաև՝ Օրենսգիրք» բառերը: 2) Առաջարկվել է Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող 15-րդ կետը խմբագրել և շարադրել հետևյալ բովանդակությամբ. Հայաստանի Հանրապետության տարածք սույն հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետում նշված ապրանքների արտադրության համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի ««Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով բացթողնման համար թույլատրվող ապրանքների ցանկը սահմանելու մասին» թիվ 1359-Ն որոշմամբ սահմանված 32-րդ խմբի ԱՏԳ ԱԱ ծածկագրի 3215 դասակարգչի և 48-րդ խմբում ներառված (բացառությամբ ԱՏԳ ԱԱ ծածկագրի 4813 դասակարգչի) գրքերի տպագրության համար անհրաժեշտ ապրանքների ներմուծումը:»: 3) Առաջարկվել է Նախագծի 2-րդ հոդվածում «հրապարակման օրվանից տասնօրյա ժամկետում» բառերը փոխարինել «հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերով:	1) Ընդունվել է 2) Ընդունվել է 3) Ընդունվել է	1) Ներառվել են անհրաժեշտ կարգավորումները 2) Ներառվել են անհրաժեշտ կարգավորումները 3) Ներառվել են անհրաժեշտ կարգավորումները
5.	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Առաջարկվել է Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ պարբերությունից հանել «հոդվածի 2-րդ մասի 14-րդ» բառերը, իսկ նույն հոդվածի 4-րդ պարբերությունից՝ «հոդվածի 2-րդ» բառերը:	Ընդունվել է	Ներառվել են անհրաժեշտ կարգավորումները

	25.11.2019թ. 01/10.2/27452-19 գրություն			
6.	ՀՀ ոստիկանություն 27.11.2019թ. N 1/24/250-19 գրություն	Առաջարկություններ և առարկություններ չկան:		
7.	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն 22.11.2019թ. N 1/01.2/1675-2019 գրություն	Առաջարկություններ և առարկություններ չկան:		
8.	ՀՀ պաշտպանության նախարարություն 29.11.2019թ. N ՊՆ/01/2675-2019 գրություն	Դիտողություններ և առաջարկություններ չկան:		
9.	ՀՀ ֆինանսների նախարարություն	Պատասխան չի ստացվել		

10.	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն 28.11.2019թ. N 01/21.1/21578-19 գրություն	Առաջարկվել է Նախագծի 1-ին հոդվածում սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի կրճատ անվանումը հիշատակելիս հիմք ընդունել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասը:	Ընդունվել է	Ներառվել են անհրաժեշտ կարգավորումները:
11.	Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն 27.11.2019թ. 01/11978-2019 գրություն	1) Նախագծի հիմնավորման մեջ հիմնական շեշտադրումներից մեկն այն է, որ գրքերի բոլոր տեսակների տպագրության համար անհրաժեշտ հումքի ներմուծումն ԱԱՀ-ից ազատելն ուղիղ և անմիջականորեն կապված է գործարար միջավայրի բարելավման հետ: Առաջարկվել է վերանայել հիմնավորման այդ հատվածը՝ հիմնական շեշտադրումը դնելով հրատարակչական գործի զարգացման, հավասար մրցակցության ապահովման, գրահրատարակչական շուկայի զարգացման վրա: 2)Միաժամանակ, առաջարկում ենք հստակեցնել, թե ինչպիսի վերահսկողական մեխանիզմներ են կիրառվելու Նախագծով լրացվող 14-րդ կետի 2-րդ պարբերությամբ նշված բացառությունների դեպքում, ով և ինչպես է հետևելու նշված բացառությունների պահպանմանը:	1)Չի ընդունվել 2)Ընդունվել է	1)Նախագծի հիմնավորման մեջ բավարար չափով անդրադարձ կատարվել է հրատարակչական գործի զարգացմանը: Այսպես՝ Նախագծի հիմնավորման մեջ նշված է, որ նախագծով առաջարկվող լրացումների իրականացումը պայմանավորված է նաև հրատարակչական գործի զարգացմամբ, գրքային արտադրանքի միջոցով ժողովրդի գրական-մշակութային ժառանգության պահպանմամբ, զարգացման, տարածման, բարեկիրթ քաղաքացիական հասարակության ձևավորմամբ, բնակչության՝ տեղեկատվություն ստանալու սահմանադրական իրավունքի ապահովմամբ: 2)Նախագծից հանվել է 14-րդ կետի 2-րդ պարբերությունը:
12.	ՀՀ արդարադատության նախարարություն 24.12.2019թ. N 01/27.2/29423-2019 գրություն	«Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի թիվ 667-Լ որոշման 13-րդ կետի համաձայն՝ Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինների ղեկավարները կարող են իրավական ակտերի նախագծեր առաջարկել վարչապետին, իսկ այլ պետական, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները՝ կառավարության համապատասխան անդամին: Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես պաշտոնատար անձ, իրավական ակտի նախագծեր վերոնշյալ իրավական ակտերի	Չի ընդունվել	«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ Պաշտպանն իրավասու է մինչև մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ընդունումը դրանց վերաբերյալ իրավասու մարմին ներկայացնելու գրավոր կարծիք: Այն բոլոր դեպքերում, երբ Պաշտպանն իր գործունեության ընթացքում պարզում է, որ մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող

		կարգավորումների համատեքստում շրջանառել չի կարող:		հարցերը օրենքով կամ որևէ այլ իրավական ակտով կարգավորված չեն կամ ունեն ոչ լիարժեք կարգավորում, ապա Պաշտպանը կարող է համապատասխան առաջարկություն ներկայացնել իրավական ակտն ընդունող մարմին՝ նշելով իրավական ակտը փոփոխելու կամ լրացնելու անհրաժեշտությունն ու սահմանները: Տվյալ դեպքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մշակվել է «ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որի նպատակն է գործարար միջավայրի բարելավումը, տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության երաշխավորումը: Նախագիծը Պաշտպանը չի դրել պաշտոնական շրջանառության: Այն ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ ստանալու նպատակով:
13.	Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն 26.11.2019թ. N 11/1178 գրություն	Դիտողություններ և առաջարկություններ չկան:		

14.	ՀՀ գլխավոր դատախազություն 27.11.2019թ. 04/20/16430-19 գրություն	Առաջարկվող փոփոխության՝ գրքերի տպագրության համար անհրաժեշտ հումքի ներմուծումն ԱԱՀ-ից ազատելու դեպքում գործնականում կարող են առաջանալ խնդիրներ ներմուծված հումքն այլ ընկերությունների կողմից ոչ նպատակային օգտագործման հետ կապված: Այս իմաստով հատկապես կարևոր է քննարկվող փոփոխության դեպքում համապատասխան հարկային վերահսկողական մեխանիզմների կիրառմամբ գրքերի տպագրման և դրա համար անհրաժեշտ հումքի օգտագործման ոլորտում պատշաճ վերահսկողությունը:	Չի ընդունվել	«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում մաքսային գործի ղեկավարումը, կազմակերպումն ու վերահսկողությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները:. Հայաստանի Հանրապետության և (կամ) Միության մաքսային օրենսդրությանը համապատասխան՝ կոմիտեն իրականացնում է մաքսային գործի բնագավառում պետական քաղաքականության և վարչարարության իրագործումն ապահովող գործառույթներ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության և Միության մաքսային օրենսդրության միասնական կիրառման միջոցով: Պետական եկամուտների կոմիտեն աջակցում է մաքսային քաղաքականության մշակմանը և իրականացնում է վարչարարություն՝ Հայաստանի Հանրապետությանը վերապահված իրավասությունների շրջանակներում: Մաքսային մարմինները, հանդիսանալով Հայաստանի Հանրապետության տնտեսական ինքնիշխանության, տնտեսական անվտանգության, տնտեսական շահերի և ներքին շուկայի պաշտպանվածության ապահովողը, կիրարկում են մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների նկատմամբ օրենսդրությամբ սահմանված նորմերը և վերահսկում են դրանց կատարումը: Հարկային հսկողությունն իրականացվում է հարկային մարմինների կողմից: Հետևաբար, առաջարկվող կարգավորումների ընդունումից հետո գրքերի տպագրման և դրա համար անհրաժեշտ հումքի օգտագործման ոլորտում վերահսկողությունը պետք է իրականացվի հարկային վարչարարության

				միջոցով: Հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի համատարած և ճիշտ կիրառության ապահովումը պետք է իրականացվի հարկային մարմնի միջոցով:
15.	ՀՀ փաստաբանների պալատ	Պատասխան չի ստացվել		
16.	ՀՀ քննչական կոմիտե 04.12.2019թ. N 01/22/16025-19 գրություն	Դիտողություններ և առաջարկություններ չկան:		

17.	Բարձրագույն Դատական Խորհուրդ 11.12.2019թ. N Ե-11384 գրություն	1) Առաջարկվել է Նախագծից հանել Օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնող 14-րդ կետի 2-րդ պարբերությունը: 2) Առաջարկվել է հստակեցնել Օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնող 15-րդ կետում «48-րդ խմբում ներառված գրքերի տպագրության համար անհրաժեշտ ապրանքների ներմուծումը» ձևակերպումը և սահմանել հիշյալ խմբի կոնկրետ դասակարգիչներ համապատասխան հղումների միջոցով՝ հաշվի առնելով իրավական որոշակիության սկզբունքի պահանջները:	1) Ընդունվել է 2) Ընդունվել է	1) Ներառվել են անհրաժեշտ կարգավորումները: 2) Ներառվել են անհրաժեշտ կարգավորումները
18.	ՀՀ ԿԵ պետական եկամուտների կոմիտե 05.12.2019թ. N 01/3-1/76300-2019 գրություն	1) ՀՀ տարածքում ապրանքների մատակարարման գործարքների նկատմամբ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափի կիրառման առաջարկությունն անհասկանալի է, քանի որ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափի կիրառումը ենթադրում է ներմուծման համար ԱԱՀ-ի չհաշվարկում և դրանց մասով ձեռքբերումներին վերաբերող ԱԱՀ-ի գումարների հաշվանցում: Տվյալ դեպքում պարզ չէ, թե ներմուծման մասով ինչ գումարների հաշվանցումների մասին կարող է խոսք գնալ: Ոչ մի երաշխիք չկա, որ արտոնության սահմանման պարագայում տնտեսվարող սուբյեկտների կողմից չարաշահումներ չեն լինի և հրատարակվող գրքերի գները կնվազեն իրենց մեջ ներառված ԱԱՀ-ի չափով: Ավելին փորձը ցույց է տալիս, որ ապրանքների և ծառայությունների ԱԱՀ-ից ազատումը, որպես կանոն չի հանգեցնում ապրանքների և ծառայությունների գների նվազման, այլ ընդհակառակը, այդ ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների համար ավելի մեծ եկամուտներ ստանալու հնարավորության ստեղծմանը: 2) Անհասկանալի է, թե ինչու է հղում կատարվում Վերամշակում ներքին սպառման համար մաքսային ընթացակարգով բացթողնման համար թույլատրվող ապրանքների ցանկը սահմանելու մասին 2015 թվականի նոյեմբերի 19-ի N 1359-Ն որոշմանը հաշվի առնելով, որ	1)Չի ընդունվել 2) Չի ընդունվել 3) Ընդունվել է	1) Նախագծով առաջարկվող արտոնության սահմանումը կխթանի տվյալ ոլորտում մրցակցային միջավայրի բարելավումը, ինչն էլ կհանգեցնի գրքերի գների նվազեցմանը կամ չբարձրացմանը: Ինչ վերաբերում է չարաշահումներին, ապա հարկային օրենսգրքի համատարած և ճիշտ կիրառության ապահովումը պետք է իրականացվի հարկային վարչարարության միջոցով: 2)«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 206-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այն ապրանքների ցանկը, որոնց բաց թողնումը թույլատրվում է «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով, սահմանում է Կառավարությունը: Ելնելով վերոգրյալից՝ հղումը կատարվել է ՀՀ կառավարության որոշման վրա: 3) Նախագծից հանվել է 14-րդ կետի 2-րդ պարբերությունը:

		ինչպես ԵՏՄ անդամ, այնպես էլ Բացթողում ներքին սպառման համար մաքսային ընթացակարգով ներմուծվող ապրանքներն ըստ ԵՏՄ ԱՏԳ ԱԱ դասակարգչի համապատասխան ծածկագրերի դասակարգումը կատարվում է՝ հիմք ընդունելով եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագինը և Եվրասիական տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկը հաստատելու մասին N 54 որոշումը: 3) Նախագծով լրացվող 14-րդ կետի 2-րդ պարբերությամբ նշված բացառությունները լրացուցիչ խնդիրներ են ստեղծելու գրքերի հրատարակությամբ զբաղվող ընկերությունների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող մարմնի համար:		